ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ՆՇԱՆԱՎՈՐ ԳՐՈՂ ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻՆ

Դեկտեմբերի 5-ին Արցախի պետական համալսարանի մանկավարժության և սպորտի ֆակուլտետում նշվել է հայ ականավոր գրող, մանկավարժ, լուսավորիչ, հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի ծննդյան 210-ամյակը: Միջոցառումը նախաձեռնել են ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը և ուսանողական խորհուրդը:

Ուսանողները ներկայացրել են գրողի կյանքը, գրական գործունեությունը, դիմանկարի պատմությունը՝ արժևորելով նրա գրական վաստակը:

«Աբովյանը մեծ լուսավորիչ էր, այսինքն՝ առաջադիմության միակ ճանապարհը տեսնում էր մարդկանց կրթելու, լուսավորելու, ազգային, հայրենասիրական գիտակցությունը արթնացնելու մեջ»,- իր ելույթում ընդգծել է ուսանողուհի Ռուզաննա Դանիելյանը՝ հավելելով, որ հայ գրականության և հասարակական մտքի պատմության վրա Աբովյանի ստեղծագործությունը խոր հետք է թողել:

Ուսանողները համոզված են, որ նշանավոր գրողի թողած գրական ու մանկավարժական հարուստ ժառանգությամբ կկրթվեն շատ սերունդներ:

ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՐԱՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 120-ԱՄՅԱԿԻՆ

Դեկտեմբերի 2-ին Արցախի պետական համալսարանում կազմակերպվել է ուսանողական գիտական սեմինար՝ նվիրված հայ լեզվաբան, ՀԽՍՀ պետական մրցանակի դափնեկիր, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Արարատ Ղարիբյանի ծննդյան 120-ամյակին:

Միջոցառումը նախաձեռնել է բանասիրական ֆակուլտետի Ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դասախոս, բ.գ.թ., պրոֆեսոր Օֆելյա Բաբայանը, որին ներկա էին դասախոսներ, ուսանողներ:

Խոսելով Ա.Ղարիբյանի՝ բարբառագիտության բնագավառում ունեցած դերից՝ ուսանողուհի Էդիտա Ալթունյանը նշել է, որ մեծ է նրա ներդրումը հայ բարբառագիտության ասպարեզում: Նա հայտնաբերել և գիտականորեն նկարագրել է 15 հայերեն բարբառներ, գիտահետազոտական աշխատանքներ է կատարել, հրատարակել ուսումնասիրություններ:

«Լեզվաբանը իր գիտական գործունեության հենց սկզբից հանդես է եկել որպես Մառի «նոր ուսմունքի» ուղղափառ հետևորդներից մեկը: Թե՛ իր գիտական աշխատությունների մեջ և թե՛ իր գործունեությամբ նա ակտիվորեն պայքարել է հանուն «նոր ուսմունքի» հաղթանակի, նրա լիակատար տիրապետության՝ ոչ միայն խորհրդահայ, այլև ամբողջ խորհրդային լեզվաբանության մեջ»,- ասել է ուսանողուհի Տաթև Բարսեղյանը:

ԱՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԱՆՐԱՔՎԵԻ ՕՐՎԱՆ ԸՆԴԱՌԱՋ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱՅՑԵԼԵԼ ԵՆ ԴՊՐՈՑ

ԱՀ Սահմանադրության ընդունման հանրաքվեի օրվան ընդառաջ Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի նախաձեռնությամբ մայր բուհի «Իրավագիտություն» մասնագիտությամբ սովորող մի խումբ ուսանողներ այցելել են Ստեփանակերտի Եղիշե Չարենցի անվան N 7 հիմնական դպրոց և աշակերտներին ներկայացրել Սահմանադրության կարևորությունն ու անհրաժեշտությունը:

ԱրՊՀ իրավունքի ամբիոնի դասախոս Տաթև Գևորգյանի խոսքով՝ նպատակն էր բարձրացնել աշակերտների իրավագիտակցության մակարդակը:

«Այս նախաձեռնության նպատակն այն է, որպեսզի հասարակության մոտ վաղ շրջանում բարձրացնենք իրավագիտակցության մակարդակը, ձևավորենք իրավական մշակույթ, որը հետագայում մեծ դեր է ունենալու յուրաքանչյուրի կյանքում»,- նշել է Տ. Գևորգյանը:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացիր քո համալսարանի մասին:
Այցելիր asu.am կայք:
www.asu.am

²ðò²Ê ÆÉ³Ø²Êº²ð²Ü

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 09(223)
դեկտեմբեր, 2019

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ ԱՐՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ

Դեկտեմբերի 9-ին Արցախի պետական համալսարանում ԱՀ Սահմանադրության օրվա առթիվ կայացել է գիտական սեմինար, որին ներկա էին ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության ներկայացուցիչներ:

Ողջունելով ներկաներին՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը շնորհավորել է օրվա առթիվ՝ խոսելով երկրի մայր օրենքի նշանակության և օրվա խորհրդի մասին:

Նա նաև նշել է, որ մայր բուհի կողմից նախաձեռնվող միջոցառումների հրավերներին մշտապես պատրաստակամությամբ է արձագանքում ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը, ոչ միայն մասնակցելու առումով, այլ նաև իր խոսքն ասելու, ով կանգնած է եղել Սահմանադրության ընդունման ակունքներում և երկար տարիներ եղել է ԱրՊՀ խորհրդի նախագահը:

Աշոտ Ղուլյանը շնորհավորել է ԼՂՀ պետական անկախության մասին հանրաքվեի, Մարդու իրավունքների պաշտպանության և Սահմանադրության օրվա առթիվ՝ ընդգծելով, որ Արցախի մայր բուհը միշտ արձագանքում է երկրի քաղաքական օրացույցի ամենակարևոր իրադարձություններին՝ կազմակերպելով մասնագիտական քննարկումներ, գիտական սեմինարներ՝ հնարավորություն տալով պետական պաշտոնյաներին մասնակցելու այդ միջոցառումներին: «Մեր երկրում ավանդույթ է դառնում նման տոների նշումը, որոնց խորհուրդը պետք է հաջորդաբար փոխանցենք նոր սերնդին, որոնք լինելու են վաղվա պետական համակարգի պատասխանատուները»:

Անդրադառնալով Սահմանադրության կարգավորումներին՝ ԱԺ նախագահը նշել է, որ դրանք նպաստում են կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված սահմանադրական կարգավորումների գործողություններին, երկրի ինքնիշխանության ամրապնդմանը, ժողովրդավարական գործընթացի հետագա զարգացմանը, մարդու իրավունքների և ազատությունների իրականացման երաշխավորման և պաշտպանության առավել արդյունավետ կառուցակարգերի արմատավորմանը, ներքին հակասություններից զերծ կառավարման համակարգի սահմանմանը, դատական իշխանության և տեղական ինքնակառավարման համակարգերի անկախությանը, անմիջական ժողովրդավարության ինստիտուտների կատարելագործմանը:

«Սահմանադրությունը երկրի քաղաքացիների միջև համաձայնագիր է, քաղաքացու և պետության փոխհարաբերությունների կարևոր փաստաթուղթ, որը երկրի բոլոր քաղաքացիների համար պետք է լինի նույն ծավալով, նույն չափով»,- ընդգծել է Աշոտ Ղուլյանը՝ կոչ անելով հետևել երկրի իրավական զարգացումներին:

Գիտական սեմինարին զեկուցումներով հանդես են եկել պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավունքի ամբիոնի վարիչ Ռիտա Առուստամյանը՝ «2017թ. Սահմանադրության ընդհանուր բնութագիրը» և ամբիոնի դասախոս Արմինե Դանիելյանը՝ «Սահմանադրական վերահսկողության ինստիտուտը ԱՀ-ում» թեմաներով:

Ա. Ղուլյանը պատասխանել է նաև ներկաների հարցերին:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ Ի ՀԻՇԱՏԱԿ 1988 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԵՐԿՐԱՇԱՐԺԻ ԶՈՀԵՐԻ

Սպիտակի երկրաշարժի 31-րդ տարելիցի կապակցությամբ դեկտեմբերի 7-ին Ստեփանակերտի քաղաքային հուշահամալիրում բազմաթիվ քաղաքացիներ իրենց հարգանքի տուրքն են մատուցել անմեղ զոհերի հիշատակին:

Հարգանքի տուրք են մատուցել նաև ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, բուհի պրոֆեսորա-դասախոսական կազմը և ուսանողները:

«ԷԴԻԹ ՊՐԻՆՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ-ՏՆՕՐԵՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Դեկտեմբերի 6-ին ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում Արցախի պետական համալսարանում «Էդիթ Պրինտ» հրատարակչության հիմնադիր-տնօրեն Մկրտիչ Կարապետյանը հանդես է եկել դասախոսությամբ: Դասախոսության թեման էր «Ժամանակակից տեխնոլոգիաները գրահրատարակչության մեջ»:

ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը ողջունել է հյուրին և շնորհակալություն հայտնել համալսարան այցելելու ու դասախոսությամբ հանդես գալու համար՝ ընդգծելով, որ տարեցտարի մեծ թափ է ստանում ոչ ֆորմալ կրթության ծրագրի շրջանակում կազմակերպվող դասախոսությունների ընթացքը: Ռեկտորը նշել է, որ «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում են հրատարակվում ԱրՊՀ գրեթե բոլոր գիտական աշխատությունները, գիտական տեղեկագրերը:

«Արդեն 26 տարի է, ինչ գործում է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունը, և այդ ընթացքում հրատարակվել են 5000-10000 անուն գրքեր, որոնք նախատեսված են տարբեր ոլորտի և տարիքային տարբեր խմբերի համար»,- ասել է հիմնադիր-տնօրենը՝ ընդգծելով, որ այսօր տպագրվում են նաև երաժշտական, ինտերակտիվ աուդիոգրքեր, մեթոդական ձեռնարկներ, ինքնուրույն ընթերցանության գրքեր, դասագրքեր, մանկական գրականություն, ինչպես նաև հայ դասական գրողների ստեղծագործություններ:

Մ.Կարապետյանը, խոսելով հրատարակչության կայքի մասին, նշել է, որ կան բազմաթիվ գրքեր, ուսուցողական խաղեր, հանելուկներ, որոնք նպաստում են երեխաների տրամաբանական մտածողության զարգացմանը, ստեղծագործական երևակայության և գրքի նկատմամբ հետաքրքրության մեծացմանը:

Հանդիպման ընթացքում բանախոսն անդրադարձել է նաև թարգմանական գրականությանը՝ նշելով, որ վերջին տարիներին հրատարակչությունը զբաղվում է նաև թարգմանական գրականությամբ, ինչը մեծ վաճառք ունի Հայաստանում. հետաքրքրված են հատկապես երիտասարդները:

ԱրՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Արցախի պետական համալսարանի մանկավարժության և սպորտի ֆակուլտետի ուսանողները պարբերաբար մասնակցում են մարզական տարբեր մրցույթների՝ զբաղեցնելով առաջնակարգ տեղեր: Այդ առիթով զրուցել ենք ֆիզիկական դաստիարակության և նախնական զինվորական պատրաստության ամբիոնի վարիչ Սուսաննա Հայրապետյանի հետ:



Խոսելով տարվա մարզական կյանքից՝ մեր

զրուցակիցը նշել է, որ այս տարի կայացել են 20-րդ ուսանողական խաղերը, որն անցկացվել է Երևանում: «Մասնակցել ենք մի քանի մարզաձևերով՝ սեղանի թենիս, հրաձգություն, հնգամարտ, վոլեյբոլ, և նշված մարզաձևերով անհատական ու թիմային հաշվարկով մրցանակային տեղեր զբաղեցրած ուսանողները պարգևատրվել են մեդալներով, գավաթներով, հավաստագրերով և դիպլոմներով»,- ասել է նա՝ հավելելով, որ նոյեմբերի 2-ին Ստեփանակերտ քաղաքի աշխատանքային կոլեկտիվների միջև սեղանի թենիսի մրցումներում ԱրՊՀ թիմը գրավել է 2-րդ տեղը՝ ընդգծելով, որ թիմի կազմում ընդգրկված էին ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը, ամբիոնի վարիչ Սուսաննա Հայրապետյանը և դասախոսներ Արթուր Պետրոսյանը, Արայիկ Ֆիրյանը:

Ամբիոնի վարիչը կարևորել է նմանօրինակ մարզական միջոցառումների անցկացումը՝ նշելով, որ դրանք նպաստում են ուսանողների մասնագիտական ունակությունների ամրապնդմանը, տեսական գիտելիքների գործնականում կիրառմանը, ֆիզիկական պատրաստության դերի բարձրացմանը:

Նա նաև նշել է, որ առաջիկայում ևս ուսանողները մասնակցելու են տարբեր մարզաձևերով մրցումների:

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դեկտեմբերի 4-ին Արցախի պետական համալսարանում ամփոփվել են Աշոտ Շահիջանյանի 90-ամյակին նվիրված մաթեմատիկայի օլիմպիադայի արդյունքները: Օլիմպիադան կազմակերպել է բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի ամբիոնի վարիչ, ֆ.մ.գ.թ, դոցենտ Լիանա Աբրահամյանը, որին մասնակցում էին Արցախի Հանրապետության բոլոր շրջանների, ինչպես նաև Ստեփանակերտի տարբեր դպրոցների 11-ից 12-րդ դասարանների 60 աշակերտ:

Լիանա Աբրահամյանի խոսքով՝ նպատակն էր փնտրել տաղանդներ և նման միջոցառումների շնորհիվ աշակերտների շրջանում հետաքրքրություն առաջացնել մաթեմատիկայի և, ընդհանրապես, բնագիտական ֆակուլտետի մասնագիտությունների հանդեպ:

Բնագիտական ֆակուլտետի դեկան, ք.գ.թ., պրոֆեսոր Վոլոդյա Միրզոյանը շնորհավորել է մրցանակային տեղեր զբաղեցրած աշակերտներին և պարգևատրել պատվոգրերով:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ը ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՆ Է

Արցախի պետական համալսարանում հաշմանդամների միջազգային օրվա առթիվ կազմակերպվել է կլոր սեղան-քննարկում: Միջոցառումը կազմակերպել են մանկավարժության և սպորտի ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոսներ Ռոզալյա Հարությունյանը և Իննա Մկրտչյանը, որին ներկա էին դասախոսներ, ուսանողներ:

Խոսելով օրվա խորհրդի մասին՝ Իննա Մկրտչյանը նշել է, որ հանրության ուշադրությունը պետք է կենտրոնացնել հատուկ կարիքներ ունեցող մարդկանց իրավունքների պաշտպանությանը՝ համախմբելով սոցիալական տվյալ խմբի նկատմամբ ուշադիր մարդկանց:

«Հասարակության մեջ տարիներ շարունակ հաշմանդամության երևույթի հետ կապված տիրել են մի շարք բացասական դիրքորոշումներ. նրանց հաճախ դիտարկում են որպես թույլ, անկարող, անգործունակ և խնամքի կարիք զգացող անձ»,- նշել է ուսանողուհի Մելինե Ղալայանը:

«Այսօր մեր պետությունն անում է հնարավորը՝ լուծելու հասարակության խոցելի խմբերի խնդիրները, որոնք բազմազան են՝ սկսած շրջակա միջավայրի մատչելիության և հավասար պայմանների ապահովումից մինչև բժշկասոցիոլոգիական, հոգեբանական վերականգնման միջոցառումների իրականացում»,- ասել է ուսանողուհի Ալիսա Խաչատրյանը՝ հավելելով, որ օգտագործելով զարգացած երկրների փորձը՝ պետք է ստեղծել այնպիսի հասարակություն, որտեղ հաշմանդամը կապրի լիարժեք կյանքով:

ԿԼՈՐ ՍԵՂԱՆ-ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ «ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ» ԹԵՄԱՅՈՎ

Դեկտեմբերի 6-ին Արցախի պետական համալսարանում տեղի է ունեցել կլոր սեղան-քննարկում՝ «Կրթությունը՝ տնտեսության զարգացման բաղադրիչ» թեմայով: Հանդիպումը նախաձեռնել էր տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանը, որին ներկա էին դպրոցների տնօրեններ, կրթության ոլորտի պատասխանատուներ, համալսարանականներ:

Ողջույնի խոսք է ասել դեկանը՝ նշելով, որ գիտակրթական համակարգը յուրաքանչյուր երկրի հենասյուներից մեկն է, և այսօր փոքր պետությունները հիմնական շեշտը դնում են ռեսուրսների արդյունավետ օգտագործման վրա, որից կարևորվում է ինտելեկտը և որի զարգացման աղբյուրը կրթությունն է:

«Ներկայումս ԱՀ կրթական համակարգը կանգնած է լուրջ մարտահրավերի առաջ. կրում ենք ինչպես խորհրդային ժամանակահատվածի կրթական համակարգից եկած ավանդույթները, այնպես էլ արևմուտքից ներթափանցած ժամանակակից տեխնոլոգիաների ազդեցությունը»,- ասել է Ռուզաննա Մանգասարյանը՝ հավելելով, որ ժամանակակից աշխարհը գնում է դեպի ինովացիոն տնտեսություն, որի հիմքը մարդն է և նրա միտքը:

ԱրՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանը կարևորել է թեմայի քննարկման անհրաժեշտությունը՝ նշելով, որ այդ ուղղությամբ լուրջ քայլեր են նախատեսում կրթության որակը բարձրացնելու համար: «Բավականին բարդ գործընթաց է, որը պահանջում է փոփոխություններ կատարել ինչպես տարբեր օղակների գործունեության մեջ, այլև մտածելակերպը փոխելու առումով»:

Քննարկման նպատակն էր վեր հանել կրթության ոլորտի խնդիրները՝ փորձելով գտնել լուծման ուղիները: Քննարկման մասնակիցները մատնանշել են ոլորտի խնդիրները՝ աշխատաշուկայի ինտեգրում, կոռուպցիոն ռիսկեր, բնագիտական ուղղվածության մասնագիտությունների հանդեպ հետաքրքրության նվազում և կարևորել բարեփոխումների ճիշտ ռազմավարության իրականացումը:

Ուսանողները ևս հանդես են եկել ելույթներով՝ ներկայացնելով կրթական համակարգի վերաբերյալ շրջանավարտների, ուսուցիչների, ԱրՊՀ շրջանավարտների ու պրոֆեսորադասախոսական անձնակազմի հարցման արդյունքները, դիտարկել տնտեսապես զարգացող երկրների կրթական համակարգերի առանձնահատկությունները:

ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Դեկտեմբերի 2-ին Արցախի պետական համալսարանի հոգեբանական կենտրոնում մեկնարկել էր հոգեբանական դասընթաց, որը վարում էր հ.գ.թ., դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ դասախոս, «Անիմա» հոգեբանական ծառայությունների հայկական կենտրոնի հիմնադիր-տնօրեն Վլադիմիր Միքայելյանը: Հանդիպմանը ներկա էին ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, դասախոսներ, ուսանողներ:

Պրոռեկտորը ողջունել է հյուրին՝ շնորհակալություն հայտնելով համալսարան այցելելու և դասընթացը վարելու համար՝ կարևորելով դասընթացի նշանակությունը ուսանողների՝ պրակտիկ հմտությունները զարգացնելու և նոր գիտելիքներ ձեռք բերելու առումով:

Վլադիմիր Միքայելյանը խոսել է հոգեսոմատիկայի մասին՝ նշելով, որ այն առաջատար ուղղություն է զարգացած երկրներում:

«Ժամանակակից աշխարհում հոգեսոմատիկ են համարվում հիվանդությունների 90%-ը, հատկապես ամենատարածվածներն են թոքախտը, խոցային, օնկոլոգիական հիվանդությունները, տուբերկուլյոզը, որոնց հիմքում ընկած են հուզական ռեակցիայի արդյունքում առաջացած սթրեսն ու լարվածությունը»,- ասել է նա՝ հավելելով, որ յուրաքանչյուր օրգան սերտորեն կապված է համապատասխան հույզի հետ:

Նշենք, որ դասընթացը ուղեկցվելու է գործնական պարապմունքներով:

* * *

Դեկտեմբերի 5-ին Արցախի պետական համալսարանում հոգեբանական դասընթացի շրջանակում հ.գ.թ., դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ դասախոս, «Անիմա» հոգեբանական ծառայությունների հայկական կենտրոնի հիմնադիր-տնօրեն Վլադիմիր Միքայելյանը հանդիպել է ոլորտի մասնագետների հետ: Հանդիպմանը ներկա էին դպրոցների հոգեբաններ, հատուկ մանկավարժներ, սոցիալական մանկավարժներ, լոգոպեդներ, դասախոսներ, ուսանողներ:

Ներկաները քննարկել են ոլորտում առկա խնդիրները՝ փորձելով գտնել դրանց առաջացման պատճառները և լուծման տարբերակները:

Մասնավորապես, խոսելով դեռահասների ագրեսիվության պատճառներից և տարիքային առանձնահատկություններից, Վլադիմիր Միքայելյանը նշել է, որ դեռահասները ինքնապաշտպանությունը արտահայտում են ագրեսիայի միջոցով: «Ագրեսիայի դրսևորումները լայն դաշտ են ներառում: Դեռահասության տարիքը խոցելի տարիք է. առաջին անգամ առնչվում են մեծահասակի հույզերի հետ, որոնց նրանք չեն տիրապետում: Նրանց վարքը կապված է ինքնագնահատականի պահպանման հետ»,- ասել է մասնագետը՝ հավելելով, որ այդ տարիքից սկսած կարևորվում է արտաքին տեսքը, որը ուղեկցվում է ամբողջ կյանքի ընթացքում:

Նա ընդգծել է, որ նրանց համար ողբերգական հետևանքներ կարող են ունենալ արտաքին տեսքին կամ մտավոր կարողություններին վերաբերող արտահայտությունները:

Հոգեբանը մատնանշել է նաև խնդրի լուծման ուղիները՝ նշելով, որ ագրեսիայից ազատվելու համար անհրաժեշտ է զբաղվել սպորտով, ընդգրկվել մշակութային միջոցառումներում. «Խնդրի լուծման տարբերակ է առաջին դասարանից երեխաներին ըստ միևնույն խառնվածքի նստեցնելը»:

Հանդիպման ավարտին Վլադիմիր Միքայելյանը պատասխանել է ներկաների հարցերին:

«ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՀԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԱրՊՀ-ՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ԴԱՍԸՆԹԱՑ

Դեկտեմբերի 9-ին «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի կողմից Արցախի պետական համալսարանում կազմակերպվել է «Ինչպես լինել մեդիագրագետ. պայքար կեղծ լուրերի դեմ» թեմայով դասընթաց, որին ներկա էին տարբեր մասնագիտությամբ սովորող ուսանողներ:

Ողջունելով հյուրերին՝ ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱ գծով պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը շնորհակալություն է հայտնել նրանց՝ կարևորելով թեմայի արդիականությունն ու այդ ուղղությամբ ուսանողներին գիտելիքներ փոխանցելու անհրաժեշտությունը:

«Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի նախագահ Դանիել Իոնիսյանը, ողջունելով ներկաներին, նշել է, որ դասընթացի նպատակն է ներկաներին տալ այնպիսի գիտելիքներ, որոնց շնորհիվ մեդիասպառողը կկարողանա ինքնուրույն հասկանալ, տարբերակել իրական, ճիշտ լուրը կեղծից:

«21-րդ դարում աշխարհում բավականին տարածում են գտնում կեղծ լուրերն ու լրատվական մանիպուլյացիաները: Դա տեղի է ունենում աշխարհի բոլոր այն երկրներում, որտեղ կա ժողովրդավարություն, դա տեղի է ունենում նաև Հայաստանում և Արցախում: Դրա դեմ պայքարի ձևերը թեև շատ են, բայց մենք վստահ ենք, որ ամենաարդյունավետ ձևը մարդկանց կրթելն է, գիտելիք տալն է: Այդ պարագայում կեղծ լուրերի տարածումը չի ունենա այն արդյունավետ էֆեկտը, որը հետապնդում են կեղծ լուրեր տարածողները»,-նշել է Դանիել Իոնիսյանը՝ հավելելով, որ նմանատիպ դասընթացները շարունակական կլինեն, սկսել են Արցախից, բայց նախատեսում են այդպիսիք կազմակերպել նաև ՀՀ-ում:

Նրա խոսքով՝ երկարաժամկետ առումով պետք է հասնեն նրան, որ ՀՀ-ում, Արցախում բոլորն ունենան այն գիտելիքները, հմտությունները, կարողությունները, որոնց շնորհիվ կկարողանան տարանջատել կեղծ լուրը իրականից, և այդ դեպքում չի լինի կեղծ լուրի խնդիրը:

Հանդիպման ընթացքում լրատվության և քարոզչության մոնիթորինգի ստորաբաժանման ղեկավար Վիկտորյա Անդրեասյանը և փաստերի ստուգման հարթակի գլխավոր խմբագիր Անի Գրիգորյանը ուսանողներին ներկայացրել են այն գործիքները, թե ինչպես տարանջատել կեղծ լուրը իրականից, կոնկրետ օրինակներով ցույց տվել փաստերը ստուգելու գործիքակազմը, ուսանողներին փոխանցել ոլորտի վերաբերյալ տեսական և գործնական գիտելիքներ:

ԱրՊՀ-ՈՒՄ ԿԱՅԱՑԵԼ Է ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՆԱՂԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ

Դեկտեմբերի 4-ին Արցախի պետական համալսարանում կազմակերպվել են գիտական ընթերցումներ՝ նվիրված հայերենի անաղարտությանը: Միջոցառումը նախաձեռնել է բանասիրական ֆակուլտետի Ակ.Ս.Աբրահամյանի անվան հայոց լեզվի ամբիոնի դասախոս, բ.գ.թ., դոցենտ Նունե Խաչատրյանը, որին ներկա էին ֆակուլտետների դեկաններ, դասախոսներ, ուսանողներ:

Միջոցառմանը մասնակցող բանասիրական և տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողները հանդես են եկել ելույթներով՝ ներկայացնելով նոր և նորագույն փախառությունների յուրատեսակ կազմությունները՝ բառապատճենումներն ու կիսապատճենումները, ռուսերեն բառերի բազմիմաստության անտեսման հետևանքով առաջացած սխալ կապակցությունները, խոսքում տարածված մերժելի արտահայտությունները, կապերի և հայերեն տարբեր բայերի սխալ գործածությունները՝ նշելով ճիշտ տարբերակները:

Նունե Խաչատրյանը շնորհակալություն է հայտնել ուսանողներին ելույթների համար՝ ընդգծելով, որ տնտեսագիտության և բանասիրական ֆակուլտետի ուսանողների համատեղ հանդես գալը պատահական չէր. հայերենը հոգածության կարիք ունի, և բոլորը պետք է պայքարեն հայերենի անաղարտության պահպանման ուղղությամբ:

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԹԻՄԸ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է «ICPC» ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻՆ, ՍԱԿԱՅՆ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՏՀԱԵ ՄԻՋԱԴԵՊ

Նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը Թբիլիսիում տեղի է ունեցել «ICPC» ծրագրավորման միջազգային օլիմպիադայի կիսաեզրափակիչ փուլը, որին մասնակցելու իրավեր է ստացել նաև Արցախի պետական համալսարանի թիմը: Թիմի կազմում ընդգրկված էին «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Տեղեկատվական տեխնոլոգիաներ» մասնագիտությամբ սովորող ԱրՊՀ ուսանողներ Հրաչ Գևորգյանը, Տիգրան Հովհաննիսյանը, Արարատ Բաբայանը և կիրառական մաթեմատիկայի ամբիոնի դասախոս Արթուր Մնացականյանը, ով թիմի մարզիչն էր: ԱրՊՀ թիմը, ցուցաբերելով գոհացուցիչ արդյունքներ, անցել է քառորդ եզրափակիչ փուլը, սակայն օլիմպիադայի կազմակերպիչները թույլ չեն տվել մասնակցել կիսաեզրափակիչ փուլին:

«Թիմը պաշտոնապես գրանցվել է, ԱրՊՀ-ն Վրաստանում կիսաեզրափակչին մասնակցելու պաշտոնական հրավեր է ստացել, սակայն ինչ-ինչ պատճառներով կիսաեզրափակիչ փուլին թիմի մասնակցությանը դեմ է եղել Վրաստանի ներկայացուցիչը».-ասել է Արթուր Մնացականյանը:

Արցախի թիմը պաշտոնական հրավերը ստացել է հենց Թբիլիսիի բիզնեսի և տեխնոլոգիաների համալսարանի (BTU) պրոֆեսոր, Ծրագրավորման աջակցության ասոցիացիայի հիմնադիր Թեմուր Զարքուայի կողմից և մեկնել Վրաստան:

«Սակայն դեկտեմբերի 1-ին՝ մրցույթի կիսաեզրափակիչ փուլի ժամանակ, Թեմուր Զարքուան Արցախի թիմի անդամներին դահլիճից դուրս է հրավիրել՝ խոչընդոտելով նրանց մասնակցությանը»,-ասել է ԱրՊՀ դասախոս, մարզիչ Արթուր Մնացականյանը:

ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան և օլիմպիադայի հայաստանյան տնօրեն Վահրամ Դումանյանի հավաստմամբ, ճնշումները միանշանակ Ադրբեջանի ներկայացուցիչների կողմից են եղել. «Ես այդ ժամանակ կապ հաստատեցի Սանկտ Պետերբուրգի գլխավոր ղեկավարի հետ, որը ներողություն խնդրեց և նշեց, որ դա անօրինականություն է, որ ոչ ոք իրավունք չունի խոչընդոտելու թիմի մասնակցությանը: Սակայն նրանք այդ պահին ոչինչ չէին կարող անել, քանի որ լծակներ չունեն ազդելու: Սանկտ Պետերբուրգի ղեկավարը խոստացել է, որ հաջորդ տարի Արցախի պետական համալսարանի թիմն իրենց կողմից մրցույթին մասնակցելու հրավեր է ստանալու»:

ԵՊՀ կարևոր հաղթանակի և Արցախի պետական համալսարանի թիմի հանդեպ թույլ տված անիրավության մասին «Արմենպրես»-ի թղթակցի հետ զրույցում ԵՊՀ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Վահրամ Դումանյանը նշել է. «Սա միջազգային ուսանողական ծրագրավորման ամենահեղինակավոր մրցույթն է, որն ընդգրկում է երկրագունդը: Ընդհանուր առմամբ, մրցույթին մասնակցել է աշխարհի 2000-ից ավելի համալսարան: Կիսաեզրափակիչը հաղթահարելը և եզրափակիչ դուրս գալն արդեն իսկ մեծ հաղթանակ է, որովհետև պայքարը դաժան է ու բարդ»,-շեշտեց նա ու պատմեց, որ վերջին քսան տարվա ընթացքում Ադրբեջանն առհասարակ դուրս չի եկել եզրափակիչ, Վրաստանի տարբեր համալսարանների հաջողվել է երեք անգամ անցնել եզրափակիչ, իսկ ԵՊՀ-ն Հայաստանի միակ բուհն է, որն առաջին անգամ 2017-ին է անցել եզրափակիչ:

Անդրադառնալով Արցախի պետական համալսարանի հետ կապված խնդրին՝ Դումանյանը հիշեցրել է, որ լրատվամիջոցներից մեկի հետ զրույցում Թբիլիսիի ծրագրավորման աջակցության ասոցիացիայի հիմնադիր Թեմուր Զարքուան ասել էր, որ դա պարզապես տեխնիկական սխալմունք էր, և Արցախի թիմը գրանցման հետ խնդիրներ ուներ:

«Նա ինձ էլ ասաց, որ գրանցման հետ կապված խնդիրներ կան, բայց ոչ մի հարց էլ չկար: ԱրՊՀ թիմը պաշտոնապես գրանցված էր, ուներ պաշտոնական հրավեր: Ադրբեջանին խրտնացնում է Արցախի պետական համալսարան անվանումը: Ադրբեջանական կողմը պաշտոնապես ոչ մի հայտարարություն չի արել այդ հարցի շուրջ»,-շեշտել է Դումանյանը:

Նա պատմել է, որ Զարքուայի հետ զրուցել է և հստակ ասել է իրենց տեսակետը, որ Արցախի պետական համալսարանը հայկական բուհ է, ինչպես մեր այլ բուհերը: «Նժարին դրված էր երկու բան՝ միջազգային մրցույթի կանոնները, իսկ մյուս կողմից ադրբեջանական կողմի ցասումը և կազմակերպիչն ընտրեց երկրորդ կողմը: Նման երևույթները միջազգային ֆորումներում, մրցույթներում հազվադեպ չեն»,-եզրափակել է Վահրամ Դումանյանը:

Այս տարի առաջին անգամ մրցույթն առանձին փուլով անցկացվել է հայաստանյան բուհերի միջև, որին մասնակցել է նաև ԱրՊՀ թիմը, որտեղ ամենաբարձր հորիզոնականները զբաղեցրել են ԵՊՀ թիմերը, լավ արդյունքներ է ապահովել նաև ԱրՊՀ թիմը՝ հնարավորություն ստանալով մասնակցելու տարածաշրջանային փուլին: